Լեռ Կամսար

Փառապանծ Վրիպակներ

Աշխարհը

Ինչպե՞ս կարող ես ունենալ աշխարհայացք, երբ չգիտես՝ ի՞նչ բան է աշխարհը...

1960

Այս աշխարհի օրենքով, այն անկախ պետությունը, որ թույլ է, ու նստեր է հանքերու վրա, անոր անկախության օրերը համրված են: Կուգան երկու ուժեղ պետություններ, կկախեն այդ «անկախը» գետնեն բարձր, հանքերը տակեն… կմաքրեն՝ ճիշտ այնպես, ինչպես մայրը կվերցնե փոքրիկին իր աթոռակով մեկտեղ, տակը կավլե ու աթոռը տեղը կդնե:

1926

Անգլիա արդեն բռներ է երկրագնդի բոլոր բաց տերը, և ուր չի հա-սեր, իր գլխարկն ու ձեռնափայտն է թողեր՝ ըսել ուզելով «հոդ մարդ չնստե»:

1926

Աշխարհի բանն այդպես է՝ անպատիժ ոճրագործություն կատարելու համար, պետություն մը կա՛մ այնքան խոշոր պիտի ըլլա, որ վախ ազդե, կա՛մ այնքան պզտիկ, որ ատամի տակ չիյնա:

1926

Նայենք, թե ո՞վ է շիներ աշխարհը և որու՞ կպատկանի:

Աշխարհն աստված ստեղծեր է վեց օրվա մեջ և հատկապես Իսրայելի ժողովրդի համար: Աբրահամին, Իսահակին և Հակոբին հազար անգամ խոստացեր է՝ ծովու ավազի ու երկնից աստղերու չափ բազմացնելե ետքն իրենց հանձնել: Միայն, որովհետև տակավին չէ հաշվված, թե քանի՞ ավազ կա ծովուն մեջ և քանի՞ աստղ երկնից երես, այդ պատճառով օրինական տիրոջ հանձնումն ուշացեր է ցայսօր: Վաղն իսկ, երբ այս պզտիկ տեխնիկական աշխատանքը վերջանա, Իսրայելի ժողովուրդը 24 ժամվա մեջ պիտի դատարկե ողջ աշխարհն ու քաշվի մեջը:

«Չէ՛, հապա, պիտի բավականանա Անգլիո տված Պաղեստինով…»:

Սակայն մնացյալ առժամյա պետություններն անգիտանալով այս կետը, այնպես մըն են նստեր, որ կարծես աշխարհն իրենց ըլլա: Նստելը բավական չէ , դեռ կկռվեն իրար հետ, զիրար կբզկտեն պատառ մը ավելորդ հող ձեռք բերելու համար:

Կուզեմ պատմել, թե ինչպես պատճառ կգտնեն պետություններն իրար դեմ կռվելու:

Բնական է , մեծ, 100-120 տարեկան կառավարություններուն չի հարմարիր առանց պատճառի մեկեն ելլել իրար դեմ, սուր քաշել:Այդ նպատակով ամեն մեծ պետություն պզտիկ պետություն կպահե իր հաշվին:

Երբ մեծ պետություն մը պատրաստ է կռվի, պզտիկ դանակ մը կսրե, կուտա այդ մանր տերություններեն մեկուն ձեռքը, քանի մը հայհոյանք էլ կդնե բերանն ու կդրկե որոշված մեծ պետությանը «սաթաշմիշ» ըլլալու: Մեծ պետությունը դուրս կելնե ապտակելու, երբ հանդես կուգա պզտիկին տերը թե չե՞ս ամչնար, խելքդ կդնես անոր խելքին… քո երկրի այսինչ մասն ինձի տուր: Ու կսկսի կռիվը:

Տրամաբանություն ու քերականական կապ չկա անշուշտ պատճառին ու արդյունքին միջև, սակայն դիվանագիտության մեջ ուղիղ գրելու և խոսելու միակ միջոցը քերականությունը չէ, այլ ուժը: